





Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:



ՀԱՆՐԵՍ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

هازا كيدا ق
مجموعه علوم

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 18

20 ԱՊՐԻԼ, 1902

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՎԵՑԱՄՍԵԱՆ

Ահա վեց ամսուան կարճ ժամանակամիջոց մը այն օրէն ի վեր որ Հանրագիտակ լոյս կը տեսնէր նոր ուղղութեամբ և նոր վարչութեամբ մը: Հանրագիտակ՝ պակաս մըն էր որ կը ընտրուէր մէջ, քանի որ լրագրական սոյն առատութեան միջոցին, հակառակ եղբայրակից շարժաթերթի քանի մը հատերու գոյութեան՝ մեր թերթը շուտով կազմեց իր ընթերցողներու շրջանակը՝ իբր թէ ուրիշ լրագիր մը չկար իրեն մրցակից: Գաւառացի թղթակիցներ, որոնց մէկ քանին անձամբ ճանչնալու բերկրութիւնը ունինք, նոյնպէս Բուրաստան Մանկանցի հին թղթակիցներէն շատեր իմանալով թէ թերթ մը կը հրատարակուի մանուկներու յատուկ, որ կրնայ օգտակար ըլլալ՝ ընտել գիտական իրենց ձեռնարկութիւնը նուիրել անոր: Եւ եթէ Հանրագիտակ այսօր քիչ շատ նախանձելի դիրք մը գրաւեց այսքան քիչ ժամանակի մէջ, սիկա պարտաւոր ենք մեր յարգելի գործակալներու անձնուէր ու անշահախնդիր ջանքերուն:

Եւ ահա՛ մեր թերթին յառաջ երթալուն նախանձախնդիր բարեկամներ կ'առաջարկեն Հանրագիտակը շարժականի վերածել: Առանձնակի եւ յատուկ նամակներով բացատրեցինք թէ՛ ինչ պատճառներ կ'արդիւնեն մեզ՝ եթէն օրն անգամ մը հրապարակ հանել մեր թերթը: Այդ պատճառներուն մէջ կայ ամէնէն կարեւորն որ Հասարակութեան վերաբերելուն համար մենք ալ ընդհանուր կերպով կը պարզենք:

Հանրագիտակի պէս թերթ մը՝ որու էջերը մինչեւ հիմա երեւցած հանդէսներու էջերէն շատ աւելի մեծ են, որու թուղթը՝ միւս թերթերու թուղթին երեք անգամը աւելի սուղ է եւ որ տարին առնուազն 200ի մօտ պատկեր կուտայ՝ անհաւատալի կերպով շատ դրամ կը ծախսէ: Ներուի մեզ պարծենալով ըսել թէ՛ եթէ մեզի պէս արհեստով տպագրիչ, փորագրիչ եւ Էֆֆօնօլիմ գիտցող մէկը չըլլար նման գործի մը գլուխը, ապա պիտի թերթ մը երկու ամիս չէր կրնար շարունակել: Վկայ՝ Բուրաստանի գաղաւթագէտ մինչեւ այսօր պատկերազարդ թերթի մը չգոյութիւնը:

Սովորական բանաձեւը կրկնել չէ միտքերնիս, երբ կ'ըսենք թէ՛ Հանրագիտակն

հրատարակելով՝ օգտակար ըլլալէ եւ բարոյական վարձատրութիւն մը սպասելէ աւելի բանի մը կ'ակնկալենք, քանի որ թերթին անունին եկած դրամէն տասը փարանոց մը խոկ մեր շահուն համար վար չդնելէ զատ՝ շատ անգամ մեր գրպանէն ալ թերթին վերայ ծախսելու կը պարտաւորինք, ջանալով միշտ աւելի ընտիր, աւելի կատարեալ գործ մը յառաջ բերել: Մեր ազնիւ Ընթերցողներէն մաս մը կարծես գուշակեցին մեր միտքը, ինքնաբերաբար՝ առաջին առթիւով վճարեցին իրենց բաժնեդիւնը: Հոս ինքնաբերաբար ըսինք, ինչու որ եւ ոչ մէկ ընթերցող կրնայ պարծիլ թէ իրեն գիտեմք ըլլանք բաժնեդիւնը վճարելու համար: մինչեւ այսօր բոլորովին ազատ ձգեցինք մեր յարգելի բաժանորդները իրենց բաժնեդիւնը ըստ հաճոյս վճարելէ կամ վճարումը յետաձգելէ, ինչու որ մեր բոլոր Բաժանորդներուն վրայ անսահման վստահութիւն ու յարգանք ունենալով՝ կը մտածէինք թէ՛ այդ գրամը արդէն խոկ գտնաւած կրնայ սեպուիլ: Մինակ ներուի մեզ աւելցնել թէ Բաժանութիւն մը ըրած չե՞նք բոլոր այն սիրելի Ընթերցողք՝ որոնք խմբագրութիւն մը կ'ազատեն դրամական նեղ կացութեան մը տանջանքներու վտիւն:

Թող սիրելի ընթերցողները չկարծեն թէ մենք տառն օրը անգամ մը թերթին հրատարակելով կը գոհանանք: — Ո՛չ, արդէն խոկ կարգադրութիւններ ըրած ենք տարբեր ջանքեր աւարտելուն պէս՝ Հանրագիտակցը շարաթականի վերածել իր այժմու դիրքով, եւ եթէ կարելի է գինին վրայ փոքրիկ դեղձ մը ընելով, եթէ սիրելի ընթերցողներն ալ իրենց կողմանէ պէտք եղած ջանքը չիրենայն:

Ինչպէս կը տեսնուի, մեր կողմէ ջանք, խնամք ու յարատեւութիւնը չէ որ կը պակսի, եւ երբ բանէ գործէ հասկցողներ կը գնահատեն մեր թերթը եւ բնաւ չեն ձանձրանար իրենց քաջալերանքը նուիրելէ մեզ՝ աւելի նոր կորով մը կ'ստանանք ձեռնարկելու յառաջ տանելու եւ հոգսով մարմնով անոր փարելու:

Մոյն առթիւ կը խնդրենք մեր ազնիւ Բաժանորդներէն՝ որոնք վեցամսեայ արձանագրուած են եւ բաժնեդիւնը չեն վճարած՝

բարեհաճին վճարել, եւ միանգամայն մեզ իմաց տալու շնորհն ընել թէ՛ թերթին առաքումը շարունակե՞նք՝ թէ ոչ:

Աններելի զանցառութիւն մը ըրած պիտի համարուէինք՝ եթէ հրապարակաւ մեր խորին շնորհակալութիւնը չյայտնէինք այն ազնիւ ու Մեծ. Պաշտօնակիցներու՝ որոնք ազնուաբար իրենց թերթերուն միջոցաւ ծանուցին Հանրագիտակցի շարունակ հրատարակուիլն, մինչդեռ մէկ երկու պատուական ու նշանաւոր թերթերու Մեծ. Խմբագրապետներ Հանրագիտակցի անունը բնականին շառնելէ զատ՝ գոյութիւնն խոկ որացան, եւ հետեւաբար իրենց թերթերուն մէջ « Մանկական Բաժին » ներ ալ ստեղծեցին, իրր թէ՛ հրապարակի վրայ այդպիսի պաշտօն մը քիչ շատ կատարող որ եւ իցէ թերթ մը չըլլար:

Տպագրիչ-Հրատարակիչ

ՆՆԱՆ. Կ. ՊԵՐՊԵՐՆԱՆ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂՔ. ԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԵՋ

« Հաստատել խորհելու, զգալու գործելու սովորութիւններ. ահա անոր մէջն է ամբողջ դաստիարակութիւնը »:

Ա. — ԿԵԱՆՔԸ ԸՆՏԱՆԻՐԻ ՄԵՋ

(Շարունակութիւն. 16րդ ԹԻԼԷՆ)

Ո « Ես անդամակցեմ եմ »

Ծանօթ մանուկներէն մէկը շարունակ կը կրկնէր իրմէ փոքր եղբորն ու քրոջը « Ես անդամակցեմ եմ ». կը կարծէր թէ ասով իր առաւելութիւնը կը յայտնէ:

Այո՛, եթէ ինքն անդամակցել է, պէտք է առաւելութիւն մը ունենայ միւսներուն վրայ. Գիտէ՞ք որն է այս առաւելութիւնը, իմաստութիւն, խելացութիւն և վայելչութիւն. բայց ասիէ զատ բան չունի:

Բոլոր եղբայրներն ու քոյրերը հաւասար

են, միայն մէկը կայ որ առաւել պարտա-
կանութիւն ունի, այն անդրանիկն է:

Անդրանիկ քոյրը կ'զբաղի փոքր եղբայր-
ներով ու քոյրերով, եթէ մայրը չկրնար
զայն ընել: Ձանոնք կը պաշտպանէ, անոնց
կ'օգնէ եւ քիչ մը աւելի կը գգուէ ու կը
շոյէ, եւ այս ներելի է իրեն: Մանաւանդ
անոնց բարի օրինակ կուտայ եւ կը սովորե-
ցնէ բարի եւ խելացի ըլլալ: Այն մեծ քոյր
որ այս ամէն պարտականութիւնները կը կա-
սարէ, իրաւունք ունի հպարտութեամբ ը-
սելու, « Նա անդրանիկն եմ »:

7. « Կրտսեր քոյր »

Այն որ « կրտսեր քոյր » կ'անուանեն,
ընտանիքին ամէնէն փոքրն է, թերեւս
զուք էք, սիրելի աղա՛ս, կամ ձեր ընկերը:

Կրտսեր քոյրը պէտք է իր մեծ քոյրը
սիրէ իր մօրը պէս: Եթէ ինքը փոքր դժ-
ուր թիւն մը ունի, մեծ քոյրը կ'ըսէ, չը-
նորհալի կերպով կը խնդրէ, որ չհասկըցած
դասը իրեն բացատրէ կամ չկըցած դժուար
դուրժը կատարէ, իրեն մեծ հաճոյք, ուրա-
խութիւն է մեծ քոյրը կամ եղբօրը հետ
չը՛նապայիլ: Անոր հետ կատակ չընէր աչ-
խատած ժամանակ: Անոր դէմ դանդաղ չը-
նէր ծնողքին:

Կայ օր մը երբ այդ մեծ քոյրը կամ մեծ
եղբայրը ձեր համար հօր կամ մօր անդ բռն-
նէ: Խորհեցէք թէ պաշտպանուելու համար
այդ քոյր կամ եղբօր ամբողջ գուրդուրան-
քին պէտք ունիք: Ձերն եղբայրներն ու քոյ-
րերը սիրելով ե ու կրնա՛մ անոնցմէ սիրուիլ:

8. Ընտանիքն դուրս ազգականներ

Ընտանիք կը կազմեն հայր, մայր, զա-
ւակներ, մամեր եւ պապեր: Կան նաեւ ու-
րիշ անձեր որ շատ մօտ են ընտանիքին,
անոնք են հօրեղբայրներ, մօրեղբայրներ և
անոնց զաւակները:

Ասոնք որչափ յաճախ եւ մօտէն տես-
նուին այնչափ աւելի կը սիրեն, եւ որչափ
որ մեզ ճանչնան, այնչափ աւելի կը կապ-
ուին մեզի հետ:

Ընտանիքը այնչափ լաւ բան է որ եր-
բէք չըսուի թէ շատ բազմաճիւղ եւ բազ-
մանդամ է: Եթէ հոգ չտանիք ազգական-

ներու հետ սիրալիր յարաբերութիւն պա-
հելու նոյն իսկ քիչ մը հեռաւորներուն հետ,
այն ատեն ընտանեկան կապը կը թուլնայ
մենչեւ իսկ կ'ոչնչանայ: Այն ատեն այլ ևս
մամերու եւ պապերու շուրջը մեծ, զուարթ
եւ բազմաթիւ տեսնելու ուրախութիւնը
չենք ունենար: Այս վիճակի արդիւնքն է
մեր կղզիացուին եւ եսասիրութեան զար-
գացում: Եսասիրութեան գերծ մնալու ամե-
նալաւ միջոցն է ընտանեկան զգացումը մեա-
կելը:

9. Ընտանեկան զգացում

Գիտէ՞ք ինչ ըսել է ընտանեկան զգա-
ցում ունենալը:

Ընտանեկան զգացում ունենալ կը նշա-
նակէ այնպէս միացած ըլլալ իրարու հետ,
որ մէկ անդամին պատահածը ամէնուն ե-
ղած նկատուի:

Իրար այնպէս սիրել, որ մէկ անդամին
պատահած վիշտը ամէնուն ալ ազդէ, և թէ
մէկուն ուրախութիւնը հաւասարապէս ու-
րախացնէ միւսները:

Դարձեալ պէտք է չդժուարանաք բանէ
մը գրկուիլ ձեր եղբօր, ձեր քոյր, ձեր հօր
ձեր մօր եւ կամ ուրիշ անդամի մը համար:

Ընտանեկան զգացում ունենալ կը նշա-
նակէ՝ յարգիլ եւ սիրել ազգանունը եւ ամէն
ինչ ընել օր ըստ օրէ պատուաւոր դարձը-
նելու համար: Անպատիւ անջիւղ մը, զոգ
մը, ընտանեկան զգացում չունի, որովհետեւ
իրեն պակասութեամբը կ'անպատուէ ընտա-
նեկան անունը:

Երբ կ'ըսէք. « Կը սիրեմ ընտանիքս »
յիշեցէ՛ք թէ կը նշանակէ « Պատրաստ եմ
անձս նուիրել ընտանիքիս օգնելու եւ անոր
պատիւ բերելու »:

10. Ընտանիքի մեջ քաղաքավարութիւն

— Վա՛րդուհի, շնորհալի եղիր սեղանի
վրայ:

— Ի՛նչ հարկ կայ, քանի որ օտար կան
ջկայ: Մեն մեզի ենք:

— Վա՛րդուհի, քաղաքավար եղիր եղ-
բօրդ հետ:

— Չարժեք, որովհետեւ եղբայրս է:

— Վա՛րդուհի, կը սխալիս, ընտանիքի

մեջ փաղափարութիւնը պարտաւորիչ է, ինչպէս ուրիշ ամէն տեղ: Երբ քաղաքավարի չես, երբ անշնորհք ձեւեր ունիս՝ կարծես ծնողքիդ կ'ըսես թէ՝ « Չեք արժեք որ ես ջանամ սիրելի եւ շնորհալի լինել ձեզ համար: քաղաքավարութիւնս եւ հաճոյաւորութիւնս կը պահէմ օտարներու համար »:

Այնպէս չէ՞, շատ ամօթ կը լինէր այնպէս ըսել: Աւելի ամօթ կը լինի, երբ մարդ մտածածին պէս ալ գործէ:

Տղա՛ք, երբ ընտանիքի մէջ քաղաքավարի չէք, երբ խոժոռ ու տմարդի էք, երբ ձեռքերդ աղտոտ, մաշկերդ չսանտրուած սեղան նստիք, երբ անշնորհք կերպով կըռուիք ձեր եղբայրներուն հետ, պիտի նմանիք փոքրիկ վարդուհիին:

Մի՛ մոռնաք որ ամէն տեղ, մանաւանդ ընտանիքի մէջ, հեմարիս փաղափարութիւնը սրեմ կը թելադրուի:


11. Փոքրիկ զոհողութիւններ

Ընտանիքի մէջ ամէն վայրկեան տուի՞թ կը ներկայանայ փոքրիկ զոհողութիւններ ընելու միտներուն հաճելի ըլլալու համար: Օրինակ, դուք կը փափաքիք աղմկալից խաղեր ընել եւ այդ հիւանդ մը անհանգիստ կ'ընէ. դուք կը փափաքիք դուրս ելնել եւ ձեր մայրը չկրնար ձեզ ընկերանալ, դուք կ'ուզէք կար կարել՝ մինչ ձեր մայրը կը փափաքի որ աւտոնին գործերով զբաղիք եւ այսպէս ուրիշ բաներ:

Եթէ ձեր այս փոքրիկ զոհողութիւնը որ րախտութեամբ յանձն չառնէք, ձեր շուրջը ոչ ոք երջանիկ կ'ընէք: Այն ատեն կը լինիք տմարդի, խոժոռադէմ, եւ թերեւս այդ բաններուն համար ձեզի եղած դիտողութիւններուն անամօթաբար պատասխանէք. ահա այսպէսով անստանելի եւ յուզումնալից օր մը կ'անցնէք, ու ձեր սիրտը հանգիստ չվայելէ:

Ձեզմէ իւրաքանչիւրը թող չօգտէ որ ձեր հայրը կամ մայրը պահանջէ որ դուք զոհողութիւն ընէք ձեր ճաշակին եւ ձեր փափաքին համար, այլ ընդհանրապէս, դուք ինքնին այդ փոքրիկ զոհողութիւնը պիտի ընէք: Ուրիշներուն համար ինքզինքի մոռցողը, ընտանեկան միութեան բանաձեւն է: Էրզրում Թրգմ. Փեփոնէ ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ

ՀԱՅՐ ՈՒ ՈՐԴԻ



Կը հեծէր զեփիւռն հեւքոյ, մարմըրուն,
Հայրիկն էր Խաղուած մէջն իր գլորքերուն.
Դիւանկ՝ հրէշտակի աղու Խըռիչքով՝
Անհո՛գ՝ կը խաղար պատուհանին քով:

Հայրն ըսաւ յանկարծ — « Խո՛նչ կը զգաս Դիւանկ,
Հո՞վն երբ կը շոյէ քու դեղձան գիտակ »:

— « Կը բաղձամ ըլլալ վարդ մ'անմեղրունակ,
Բացուիլ ու Խոռմիլ անոր հանգունակ »:

— « Իսկ երբ կը դիտես կապո՞յտն երկընքին,
Ուր կը ցոլանան աչերդ խայտազին »:

— « Կը բաղձամ ըլլալ անրիժ մի հրեշտակ,
Աղբիւրի մը պէս վրձիտ ու յստակ »:

— « Հապա դաշտի՞ն մէջ երբ դուն կը խաղաս՝
Ծաղիկներուն հետ՝ ի՞նչ կը զգաս տըղաս »:

— « Կ'ուզ'իմ հոլա՞ն եւ ըլլալ մի Թիւեռ,
Քաղել յասմերուն մեղրանուշ հիւծեր »:

— « Բայց լոկ մարդ խօսքով չըլլար հրեշտակ,
Պէտք է ունենայ կամք, ուժ՝ կուրծքին տակ »:

— « Հայրի՛կ, կ'ուզեմ ա՛հ, կ'ուզեմ ամէնն ալ,
Բայց ատոնք ինչո՞վ կրնամ ունենալ »:


— « Հանրագիտ սկո՛ւ » ըսաւ հայրն իսկոյն,
Ու հանդէս մ'անոր տըւաւ վարդագոյն:

— « Ա՛հ, հայրի՛կ » մը՛նչեց՝ տըղեկն արձնամիտ...
Ու դէմքն էր ծածկած՝ արցունք ու ժըպիտ:

Շատ կարգաց Դիւանկ այդ գողտրիկ հանդէս,
Ուր կը խայտային հրեշտակներ անտես.
Այսպէս կարդալով միշտ Հանրագիտակ՝
Եղաւ բարի մարդ ու բարի հրեշտակ:

Տարէնտէ

ՄԿՐՏԻՁ Ա. ՅՈՒՆԵԱՆ





ԳԱՐՆԱՆ ԶԱՐԹՈՆՔԸ

— Ողջո՛յն, գարուն կենսաբեր հիւր,
Փրփրեցնես ծաղիկներ բիւր,
Համայն բնութիւն ոգեւորւած,
Կարծես՝ կ'օրհնէ Տերնն Սասունւո՛ւմ :

Ծառերն բոլոր կանաչ հագած,
Նման հարսի պերն 'ւ ամօթխած,
Նարկիզ, հարսնուկ դեռ նորագարբ,
Կը խրնկարկեն մեղմ օդը արդ :

Բուրումնաւէտ երգ մ'ես ինձին,
Մեծ պարգեւը դուն երկինքին,
Որ կեանք տալաս առատօրէն,
Զինչ կապոյտի վեհ ծոցերէն :

Տիեզերք համայն հրեւեցնես,
Նրբ դուն կուգաս աշխարհի տես,
Սրբես արցունքն աղիւսներուն,
Որ չեն տեսած ուրախութիւն :

Անտառներու մեջ ծառերուն,
Սոխակն երգէ կեանքն ու գարուն,
Ծառէ ի ծառ ուսոսելով,
Կարծես՝ կանչէ ընկեր մ'իւր բով :


Առուակն ծալած արծաթ ծալքեր,
Գլխաւորով միտք կը վազէր,
Զայնակցելով քրոջուններուն,
Որ նուրբան միտք հո՛ն՝ հեռո՛ւն...

Գարուն, դուն ես իմ յոյս միայն,
Որ փարատես միտքս համայն,
Նրբ գամ նստիլ առուակին բով,
Նրազեմ իմ հոգիս խռով :

Այսպէս գարուն ամեն տարի,
Մեզ կ'այցելէ կ'ուգայ կ'անցնի,

Օրհնագիր

ԱՐԱՔՍԻ Ե. ԵԱՎՐՈՒԵԱՇ



ՀԱՃՈՅՔԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

(ՈՒՍԱՆՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԷՍ)

Հարուստ ըլլալ ուզող Պ. Գրագէտը դեռ նոր դուրս ելած էր, նոյն միջոցին հարուստ տիկին մը իր կառքէն իջնելով դռնէն ներս մտաւ, իր սպասաւորն առջեւէն կ'երթար և մեծարանօք ճամբայ կը բանար. երբ տիկինը երեւցաւ, տեսնուեցաւ որ չքեղապէս հագուած, սգուած, գեղեցիկ, շնորհալի ու համարձակ կին մըն էր: Ի՞նչ պակաս կրնար ունենալ այս ամէն կատարելութեանց տէր մէկը:

Պ. Ճակատագիրն եւս սոյն խորհուրդն ունենալ կը թուէր, քանզի այսպէս ըսաւ.

— Կա՛յ պակաս բան մը, որուն տիրանալ բաղձաք:

— Երջանի՛կ ըլլալ կ'ուզեմ, տէր Ճակատագիր:

— Աւա՛ղ տիկին, եթէ դուք երջանիկ չըլլաք, հապա ո՞վ կրնայ ըլլալ:

— Ներեցէ՛ք, Պ. Ճակատագիր, ես հոս փիլիսոփայելու եկած չեմ, այլ փափաքս յայտնելու:

— Հազա՛ր ներում, տիկին, դուք ունենալ կը թուիք երջանկութեան ամէն գերազանց միջոցները. բայց եթէ երջանիկ չէք, ի՞նչ բանէ կ'ուզէք զրկել զձեզ:

— Ամէն բանէ, ըսաւ տիկինն աչքէն արտասուած խոշոր կաթիլներ հոսելով եւ զոր սրբելու համար ծոցէն ոսկեթել ծոպերով մետաքսեայ թաշկինակ մը հանելով:

— Տիկին, ես պիտի բացատրեմ ձեզ վիճակ մը, ուր խոնարհելով կրնաք անշուշտ երջանիկ ըլլալ: Կը ճանչնամ տիկին մը, որ իր ամուսնէն մոլեղնաբար կը սիրուի, ունի հնազանդ զաւակ մը, թէեւ քիչ մը տխմար, սակայն մայրը զայն չնչմարեր: Այդ կիներն կիրակի օրերը գիրք մը կը կարդայ, ապա իր միակ մետաքսեայ սեւ շրջագգեստը հագնելով, մեծ ուրախութեամբ եւ հաճոյքով իր բարեկամաց այցելութեան կ'երթայ: Լուր օրերն մինչեւ իրիկուն կը գործէ եւ մինչեւ առտու կը քնանայ. երբ վրան քիչ մը ձանձրոյթ գայ, իր մանկա-

կան երգերէն մին կը մըմնչէ, եւ սակայն իրապէս երջանիկ է:

— Ատիկա չատ լաւ է, ըսաւ տիկինն ընդմիջելով Պ. Ճակատագիրն. Այդ պարագայից ներքեւ չեմ յուսար երջանիկ ըլլալ:

— Միայն ան երջանիկ չէ, եթէ մեր սակարկութեան համեմատ անոր վիճակին խոնարհիլ ուզէք, կրնաք անոր պէս ալ երջանիկ ըլլալ:

— Աւելի լաւ է գիտութեամբ ապերջանիկ ըլլալ, քան թէ տգիտութեամբ երջանիկ ըլլալ:

Եւ ապա խստիւ յարեց.

— Սակի կ'ընտրեմ իմ ներկայ դիրքիս մէջ մնալ, քան ո եւ է փոփոխութիւն մը մտցնել իմ սովորութեանցս մէջ:

— Դո՛ւք դիտէք, տիկին, ըսաւ Պ. Ճակատագիրն:

Եւ տիկինն գլխու շնորհալի եւ նազելի խոնարհութեամբ մը խանութէն ելլելով՝ ինքզինքն իր չքնաղ կառքին մէջ նետեց:

Ասկէ ետքը տեսայ որ ուրիշ շատ մը յաճախորդներ ներկայացան եւ իրենց խրնդիրներն ներկայացոյցին. բայց խիստ քիչերը փոխարէն զոհողութիւն մը յանձն կ'առնուին եւ կամ չնչին բան մը սալ կ'ուզէին:

Բարեճեւ երիտասարդ պարոն մը ներս մտաւ, խնդրելով իրեն համար հարուստ ժառանգուհի մը: Պ. Ճակատագիրը քիչ մը խստիւ դատեց զայն:

— Ըսել է թէ խնդրը ոչ այնչափ ամուսնանալու, այլ հարուստ ամուսին մը ունենալու վրայ է. ի՞նչ պիտի զոհես նայինք: Կնոջդ գեղեցկութիւնը կրնա՞ս զոհել:

— Այո՛:

— Խելքը ու իմաստութիւնը:

— Այո՛:

— Նոյն ինքն քու գիտութիւնդ:

— Բոլորով սրտիւ, միայն թէ ոսկիներուն տիրանամ:

— Պէտք է որ կրօնքդ եւ ամէն համոզումներդ ալ տաս:

— Ամենայն յօժարութեամբ:

— Լա՛ւ, այն ատեն միայն կին մը պիտի ունենաս, երբոր կրօնքդ, խելքդ, գիտութիւնդ եւ ամէն գաղափարներդ տաս: Հա՛նէ՛ նայինք:

Եւ բարձրաձայն քրքիչով մը թնտաց բողբոս սրահը:

Այսպէս շարունակուելով՝ սենեակը պարպուելու վրայ էր. խորհեցայ որ իմ փափաքներս յայտնելու ժամանակը եկաւ, ուստի ներկայացայ Պ. Ճակատագրին եւ խնդրեցի որ ինծի առողջութիւն չնորհէ: Երկար վիճաբանութիւն մը սկսաւ մեր մէջ. տեղը, խնդրեց ինձմէ որ իմ կենացս կէսն եւ շահերուս ու դրամագլխիս կէսն տալու յօժարիմ:

— Տէ՛ր պատուական, ըսի, ատոր վրայ խորհելու եմ:

— Շատ երկայն մի՛ խորհիր, ըսաւ, վախճալով որ առիթը ձեռքէ պիտի փախցընէի:

— Լա՛ւ, ըսի, կը խառնովանիմ որ իրաւունք ունիք, եւ վաղը պատու պիտի ունենամ՝ ձեզ ներկայանալու:

Գրասենեակս դարձայ սակաւ ինչ յուզուելով լսածներուս եւ անսածներուս վրայ. պառկեցայ եւ հետեւեալ առաւօտուն երբ արթնցայ, զգացի որ ուղեղս սաստիկ ջերմէ մը բռնուած էր. խորհուրդներս գիրար կը հալածէին, այնպէ՛ս որ չէի կրնար ետեւէն հասնիլ: Կը խօսէի՝ բայց չէի զգար թէ ի՞նչ կ'ըսէի. երբեմն կը պօռայի, երբեմն կը խնդայի եւ որչափ որ կը յիշեմ վրաս ընդարմացում մը եկաւ եւ կատարեալ խորքունի մէջ ընկղմեցայ. երբ որ արթնցայ, լսեցի որ այսպէս կ'ըսէին անկողնոյս բոլոր տիքը եղողները.

— Պիտի ապրի:

Եւ յիշաւի ապրեցայ: Զարմացայ այս պատահարին վրայ. կեանքս կորսնցնելու երկիւղն էր որ զիս այնչափ թափօռեցուց եւ որով վերջապէս հասկեցայ թէ առողջութեանս համար հարստութեանս մէկ մասը զոհելու էի:

Առի ունեցած ստակիս կէսը, ձի մը ու մարմնամարդի գործիքներ գնեցի: Օրուան կէսը միայն կ'աշխատէի եւ մնացեալ ժամերը կ'ուտէի, կը շրջագայէի ձիով եւ մարմնամարդ կ'ընէի: Շուտով իմ առողջութիւնս վերստացայ ու նորէն երջանիկ եղայ:

Կենացս կէսն եւ ստակիս կէսը զիս փրկեցին:

Բայց զարմանալին այս էր որ, չատան-

գամ կը փնտռեմ « Նախախնամութեան փողոցն եւ Պարոն Ճակատագրին խանութը », բայց չեմ գտներ:

Ճշմարտն այս է որ երկուքն ալ երազի պէս կուգան այժմ:

(Իմ սենեակէս)

Վ. Յ. ՅԱԿՈԲԵՆ




ՆԱԽԱԹԵԼԻԵՐԸ (PROTOPTÈRES)

Որչի՛ ձեւ ունեցող այս կենդանիները քիչ շատ օճաճուկի կը նմանին. խոշոր թեփերով ծածկուած է անոնց մարմինը եւ զոյգ անդամներու տեղ թեւաձեւ բաներ մը ունին: Այս ձուկերը Ափրիկէի արեւադարձային մասերուն մէջ կը վխտան, Սենեկալէն մինչեւ Մօզամպիք, Վերին Նեղոսէն մինչեւ Օկուէ:

Որչափ որ սոյն զարմանալի ձուկերուն բարքերուն ու կեանքին վրայ քիչ բան գիտցուած է, դարձեալ այդ քիչը՝ խիստ հետաքրքրաշարժ է: Ասոնք մեծ դետերու եւ գերքներուն վրայ կազմուած ճախճախուտներուն մէջ կ'ապրին: Երբ ջուրերը բարձր են ու ճախճախուտները ջուրով ծածկուած, Նախաթելերը գործունեայ կեանք մը կը վարեն, հոն հօս կը վազվզեն, ճճիներ կ'որսնան ու իրենց սուր ակռաներովը կլլէլ չի կրցած կենդանիներուն մարմինը կը խանեն ու կը բրցեն: Բայց երբ անձրեւները կը զաղրին ու ջուրերը կը քաշուին՝ ճախճախուտները շուտով կը ցամքին. չարածի կենդանին գուշակելով որ իր սովորական տարրը պիտի պակսի, ճահիճին ցեխին մէջ կլլու ծակ մը կը բանայ, այնչափ խորունկ որ եթէ անոր յատակը ծալուած նստի, գետնին երեսէն երկու թզաչափ վարը գտնուի:

Նախաթելը՝ ծակին խորը քաշուած, ամբողջ մարմինէն տեսիկ մը մածուցիկ նիւթ դուրս կուտայ՝ որ չորնալով պատեան մը կը կազմէ՝ շերամի բոժին նման. ահա ասոր մէջ է որ խեղճ ձուկը կծկաւելով աղէկ օրերու կ'ապասէ: Այս պատեանը ուռած տոպրակի ձեւ ունի բերանը կլոր կափարիչով մը. ասիկա քիչ մը անհաւատալի կը թուի, որովհետեւ այս բոժը՝ կենդանիին

մորթէն դուրս ելած մածուցիկ նիւթէն կազմուելով, սլարտ էր անոր մարմինն ձեւն առնելով, մինչդեռ անանկ չէ։ Սոյն նիւթը դուրս տրուելուն պէս ուժով մը կը փակչի ցեխին ու այնպէս կը մնայ ու կը չորնայ. կենդանիին ծանրութեան տակ այս տեսակ



մը տոպրակին տակը վար կը քաշուի եւ կը կլորնայ, իսկ բերանը ցեխին փակած ըլլալով կը ձգտի ու կը տափակնայ։

Երբ ճահիճները բոլորովին կը չորնան, նախաթեւերը կը քաշուին սոյն ծակերուն մէջ եւ հոն անզգայ քրւնի մը մէջ կը թաղուին՝ մինչեւ որ անձրեւները լեցնեն ճահիճները։

Ասիկա առաջին օրինակը չէ ջուրէ դուրս ապրող ձուկի մը։ Հանրագիտակի նախորդ թիւերէն մէկուն մէջ խօսած ենք այսպիսի զարմանալի ձուկի մը վրայ։ Հիմա՝ իբր երրորդ ըլլալով՝ ուրիշ կենդանի մը յիշենք որ թէ ջուրին եւ թէ օդին մէջ կ'ապրի, եւ որ գիտուններուն մէջ բաւական խընդիրներ հանեց՝ նշանաւոր բնապատումներ իրար ձգելով։ Այս ձուկն է Թեփապարիկը (Leopidosiren), որ թէ ջուրին մէջ թթուածին ծծելու համար խռիկներ ունի եւ թէ ցամաքի վրայ շնչելու համար թոքեր։ Քանի մը գիտուններ՝ Միլն Էտուարսոն, Տիւպէրնուա եւ Պօլֆ, իբր ձուկ կը դասակարգեն այս կենդանին՝ ինչու որ չի թեփ ունի. իսկ ուրիշ բնապատումներ՝ Օուէն, Միլլէր, Ակասիոն՝ գորտազգիներու մէջ կը դասադրեն զայն։

Երկակենցաղ բառը ամէնէն յարմարն է նախաթեւի պէս կենդանիներու համար, որոնք ակնյայտնի միջանկեալ կապ մը կը կազմեն դուրտազգիներու եւ ձուկերու մէջ։

Այս կենդանիները ջուրին մէջ դժուարաւ կը շարժին, իրենց թեւանման լողակները՝ գրեթէ մեծ արգելք մըն են իրեն ազատ շարժումներուն. բայց առէք ու հողին վրայ դրէք ատոնք, պիտի տեսնէք որ օձի մը դիւրաշարժութեամբ կը սողոսկին գետնին վրայ։

Նախաթեւերը երբ պզտիկ են, բնաւ դուրս չեն ելլել իրենց բժոյժին, մինակ գլուխնին կ'երկնցնեն ջուրին մէջ գտնուած ճճիները որսալու համար. այս բնածին զգուշութիւնը անհրաժեշտ է իրենց համար, որովհետեւ եթէ յարձակելու համար սուր ակռաներ ունին՝ ինքզինքնին

պաշտպանելու ամէն միջոցէ դուրկ են, նոյն իսկ երբեմն իրարու շատակերութեան զոհ կ'երթան։ Բայց երբ հասակնին բաւական կը մեծնայ, այն ատեն ալ պէտք չեն ունենար իրենց բժոյժի պաշտպանութեան, որովհետեւ եթէ ուրիշ կենդանի մը խածնուելով իրենց մարմինն մէկ մասը բրցուի, շուտ մը միտերը նորէն կը կազմուին եւ վերքը կը լե-

նայ ու կ'առողջանայ:

Հասակը կէս մէթրէն աւելի չըլլար. սովորաբար, թէեւ ճամբորդներ կան որոնք թեւի հաստութեամբ ու մէկ մէթր երկայնութեամբ նախաթեւեր տեսած ըլլալին կը պնդեն:

ԼԷՈՆ ՎԱՅԱՆ

Փ Ո Ւ Ր Ի Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋԲԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Հ Ի Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Ք Ի Ն Ն

(Շար. 16րդ թիւէն)

ԳԼՈՒԽ Ը.

ՅՈՒՆԱՍՏԱՆ. — ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Պեղասզեանք եւ Հելլենք. — Եւրոպան աւարտող երեք թերակղզիներէն ամէնէ աւելի փոքրն է: Իր առաջին բնակիչներն եղած կը համարուին Պեղասզեանք եւ Իսօնները (Հոնիացիք) որոնք արիական մեծ ցեղին անդամներն են:

Պեղասզեանքը որոնք իրենց այլ եւ այլ ցեղերով ծածկեցին Փոքր Ասիան եւ Իտալիան, չուտով անյայտացան եւ իրենց գոյութեան ուրիշ ապացոյցներ չթողուցին, բայց միայն կիկլոպեան կոչուած չէնքեր, որոնք դեռ կը տեսնուին Միկէնքի, Տիւրէնթի եւ Արգոսի մէջ:

Պատմական աւանդութիւններն որոնք այսօր այնքան արժէք չունին ուսումնական ու բաղդատական պատմութեան նորանոր հետազոտութեանց, քննութեանց եւ եզրակացութեանց հանդէպ, այնպէս կը ցցեն թէ, Կէկլոպս անուն եգիպտացի Ատտիկէի բնակիչները վերածել է երկու դասու աւաններու, որոց մայրաքաղաքն եղաւ Աթէնք: Կադմոս ալ Բէոփտիաի մէջ բերել է Փիւնիկեան այրէնգիրը: Դանաուս եգիպտոսի քանի մը արհեստները կը ներմուծէ Արգոսի մէջ, եւ Փուլգացի Պեղոպսը կը հաստատուի Ելադաի մէջ: Այս աւանդութեանց կարգին մէջ ամենէ աւելի ստոյգ դէպքն եղաւ Հելլենաց արչաւանքը որով

ջնջեցին Պեղասզեանքը ընկղմելով իրենց ցեղախառնումին մէջ:

Հելլենաց գլխաւոր ցեղերն էին Դորիացիներն ու Աքէացիները: Ասոնք նախ ունեցան իրենց ցեղակիցներուն վրայ տիրապետական առաւելութիւնը. սակայն իրենց պատմութեան մէջ տակաւին լոկ առասպելախառն զրոյցներ կը գտնուին, ինչպէս են Հերքիւլէսի եւ Թէսէոսի նման դիւցազանց նկատմամբ յիշատակուածները. նոյնպէս կը պարունակեն բախտախնդիր արչաւանքներ, որոնցմէ մին է Յասոնի հրամանատարութեամբ Ոսկեգեղմը գողնալու համար Արգոնաւորդաց արչաւանքը ձերմակ ծովէն դէպ ի Սեւ ծով, ի Կողքիս, կամ Թէրէն պաշարող եօթն իշխանաց պատերազմը:

Տրովադաի պատերազմը (1184). — Այս պատերազմը կրնայ ստոյգ ալ ըլլալ, իբրեւ Հելլադաի մեծ արչաւանք մը՝ հաւաքական յարձակում մը ընդդէմ Ասիայի: Գալով Տրովական դէպքին մանրամասնութեանց որով բանաստեղծները, մասնաւորապէս Հոմերոսի կողմէ, այդ հռչակաւոր պատերազմին մանրամասնութիւնները վարդարող կամ չափազանցեցնող պարագաներուն ու յիշատակուածներուն ստուգութենէ զուրկ՝ լոկ ցեղային նախասիրական դիւցազնոգի կտրճութիւնները իբրեւ իրենց ազգային արժանապատուութեան աւանդական զգացումները գրգռելու ու վառ պահելու համար միայն հազներգուած բաներ եղած կ'ըլլան անշուշտ, ինչպէս ամէն ազգ սովոր է իր ծագումն ու նախահայրերը գերմարդկային կամ հասարակ մահկանացուներէ գեր ի վեր էակներ ցցնել եւ իր պատմիչներուն ձեռքով ալ այնպէս աւանդել տալ յետոց: Տրովադան կ'ըսէին, Փոքր Ասիայի հիւսիս-արեւելակողմը հաստատուած հզօր տէրութեան մը մայրաքաղաքն էր: Այս Տրովադաի թագաւոր Պրիամոսի Պարիս տղան առեւանգեց Սպարտաի մէջ իշխող Պելոպիդէս Մէնէղաուսի Հելինէ անուն կինը: Հելլադա մտնող այս առեւանգումին վրէժը լուծելու համար սպառագինեցաւ, եւ Մենէղաուսի եղբայր Ագամեմնոնը, որ Միկէնքի թագաւոր էր, զօրաւոր բանակով մը ու նաւատորմիկով մը ծովէն անցաւ, Տրովադաի դէմ յարձակեցաւ: Տրովադա տալի դիմադրեց հելլենական այս յարձակմանց դէմ, մինչև այն

օր, ուր Հելլենները իբր թէ այլ եւս ձանձրացած պատերազմէն ձեռնթափ հեռանալ կեղծելով, Տրովացւոց ընծայեցին իբրեւ նուէր հսկայակերտ փայտաշէն երիվար մը, որու փորուն մէջ պահուըտցուցած էին յունական բանակին քաջամարտիկ զինուորները: Տրովադացիք այս պատրուակեալ պարգեւը իբրեւ ճշմարիտ ընդունելով ներս՝ իրենց մայրաքաղաքին մէջ սիրով ընդունեցին առանց զիտնալու թէ այն հսկայ եւ ըստ աւանդութեան, ձիակերտ փայտակոր կողերուն մէջ պահուըտած հելլէն քաջերը գիշերը դուրս ելլելով, քաղաքը կրակի պիտի տային: Տրովադա յաղթուեցաւ, Պրիամոս սպաննուեցաւ, իր մեհեաներու բազիններու կամ խորաններու առջեւ: Բայց այս խարդախ յաղթանակը տանող Յոյն իշխաններն ալ իրենց տեղերը վերադարձած ատեն շատ մը սոսկալի դժբաղդութեաց մասնուեցան, ու իրենց վերադարձը դժբաղդութեամբ նշանաւոր հանդիսացաւ: Ոմանք կորսուեցան ծովերն անցած ատեն, կամ Ողիսեոսի նման փոթորկալար ուրեաց ու հողմոց խաղալիկ լինելով երկար ատեններ մնացին հեռի իրենց բնագաւառէն: Հոմերոսի ըսածին նման իրենց վառարանի ծուխին իսկ կարօտը քաշելով: Անոնցմէ շատեր երկար ատեն բարբառական ու աստանդական թափառեցան հեռաւոր երկիր մը իրենց նոր բնագաւառ ընելու համար: Պատմական ճշմարտութիւն մ'է այս: Տրովադական պատերազմը եւ անոր յարակից աւանդական, վիպական եւ նշանաւոր մանրամասնութեամբ բանաստեղծագրած են մեզ իշխակացն ու Ողիսականը սքանչելի հրապուրանքով մը:

(Շարունակելի)

ԵՐԿՐԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒՄԻ

(Շարունակութիւն. 16րդ քիւն)

Պէտք է բոլորովին բողոյ աւանդական սովորութիւնները

Ըսել է թէ, պէտք է արհամարհել աւանդական մշակութեան բոլոր հնօրեայ ուղղութիւնները, և այսուհետեւ զանց ը-

նել ինչ որ միշտ մշակութեան խարխալ էր զած է, այն է աղբն:

Ո՛չ: Պէտք չէ բնաւ թեթեւանորէն զանց ընել նախահայրերէ մնացած կերպերը, ոչ ալ խիստ արհամարհանքով արտասանել սովորամոլութիւն բառը: Սովորամոլութիւնը, ըստ ինքեան, գիտութիւնն ու փորձառութիւնն է որ բերեղացած է թերեւս անձուկ, բայց պատուական տարազներով: Շատ քիչ անգամ կը պատահի որ սովորամոլութեան մը խորը չգտնուի միամտաբար արտայայտուած ճշմարտութիւն մը, որ նախ, գիտուններու անարգանքը կը շարժէ, և որ, ետքը, իրեւ կարեւոր օրէնք մը կը թուի անոնց:

Այսպէս, երկար ատեն գիւղացիները շատ ու շատ ըսին թէ քրիստոնէական պարտաւորութիւնները հողը կ'այրեն: Հողագէտները զանոնք ծաղիւցին, և սակայն այն ատենէ ի վեր գիտունները հասկցան որ, իրաւ ալ քրիստոնէական պարտաւորութիւնները շատ պարագաներու մէջ հողը կ'այրեն երբ առանց աղբի դորձածուին: Ահա ինչ որ շատ լաւ կը բացատրէ Պ. Տէհէլէն. « Երբեմն այս փոփոխումը աղիտաբեր է: Աղբէ զրկուած, բայց նիթրաղ տը սուտով, սիւբէրֆոսֆատներով և բօլատով պարարտացած հողերը իրենց ֆիզիքական յատկութիւնը կը փոխեն, կը կարծրանան: Կաւերը յղկուելով անիլըրելի կոշտեր կը ձեւոյնեն, և ալ մըշակութիւնները չեն կրնար ի գործ դրուիլ: Իմ փորձի արտիս շատ մը մասերը ամուլ եղած են մեծաքանակ ամօնիաքի ծծմբատ դորձածելու համար »: Այս իրողութիւնը և ուրիշ հարիւրաւորներ հաստատած են թէ իրաւունք ունին գիւղացիները որոնք չեն թողած աղբով մշակութիւնը, ինչպէս անխոհեմ տեսագէտներ թողուլ պատուիրած էին յանուն գիտութեան: « Հողը, ըսած են անոնց այս սուտ գիտունները, ինքնին բան մը չէ: Անիկա անօթ մը կամ ալամպիք մըն է պարզապէս, որուն մէջ քանի մը տեսակ տարրեր կան, զոր օր. բորակածին, ֆոսֆորական թթու, բօլատ և կիր: Քանի որ մենք այս ալամպիքը կը լեցնենք այս տարրերով բաւական քանակութեամբ, ալ ուրիշ բանի պէտք չկայ: Կրնանք մեր փոշիներով (քրիստոնէական պարտաւորութիւններով) առաւ ցորեն արտադրել »:

Այս խրատներուն հաւատ ընծայողները բոլորովին պիտի կործանէին: Վասն զի, այսչափ կնճռոտ խնդիրի մը մէջ, յորում դեր ունեցող տարրերը այնչափ շատ են, պզտիկ բան մը կը մոռցուի անշուշտ, եւ նորակարգիչները բան մը միայն մոռցած են, որ աւագ կարեւորութիւն ունի, այսինքն երկրին ոչ-քիմիական այլ ֆիզիքական կազմութիւնը: Անոնք անհոգ գտնուած են լիովին հասկնալու համար թէ բուսահողը բուսական կեանքի մէջ անհրաժեշտ գործակատար մը չէ՞ միթէ և թէ իրենց հանքային փոշիները կրնա՞ն ըստ չափու ապականուած բուսահողին տեղը բռնել:

Բուսահողը՝ տարրաշաղկապած բոյսերու, կտորուանքներու եւ հողի ձճիւններու մնացորդներուն այլանդակ մէկ բաղադրութիւնն է, որ հողը շարժականութեան եւ ծլարձակութեան խիստ նպաստաւոր թափանձկութեան վիճակի մը մէջ կը բռնէ:

Յիրաւի, չբուեր միայն որ հող մը պարունակէ այն չորս տարրերը, զոր թուեցինք, պէտք է նաեւ որ ան պարունակէ զանոնք շարժումի մէջ դնելու եւ անոնց կենդանութիւն եւ ոյժ տալու բան մը: Ասոր համար պէտք է որ ան ունենայ ջուր և օդ: Բոյսերը կը փճանան երբ այն հողը, որուն վրայ հաստատուած են անոնց արմատները, զուրկ է թթուածինէ: Արդ քիմիական պարարտութիւնը այս բաներս չի հայթայթեր: Պէտք է ուրեմն զանոնք ապահովել ֆիզիքական լաւ տրամադրութիւն մը ունեցող հողով: Առանց բուսահողի եւ շատ բուսահողի կարելի չպիտի ըլլար ֆիզիքական լաւ կազմակերպութիւն մը ունեցող հող մը ունենալ: Արդ, աղբը միայն բուսահող կուտայ:

Ուրեմն, աղբը միշտ պիտի մնայ պարարտութեան խարխիւր: « Բնաւ խնդիր չէ, ինչպէս ի սկզբան կարծուեցաւ, կ'ըսէ Պ. Տէհէրէն, կազմակերպական պարարտութիւնները զանց ընել: Քիմիական պարարտութիւնները չեն սահմանուած աղբին տեղը լեցնելու, այլ անոր անբաւականութեան առջեւը առնելու: »

* * *

Քիմիական պարարտութիւնը ապագային յաղթականն է:

Բայց այս անբաւականութիւնը մեծ է, մանաւանդ ծերացած հողի մը համար. ուրեմն քիմիական պարարտութիւններու դերը անհուն է եւ անոնք դաւար վերջնականապէս չահած են կարծեմ:

Այսօր, սիւրէրֆօսֆատը ամէն տարի միլիոնաւոր քիլօկրամներով կը թափեն երկրին վրայ: 1899էն սպառումը աւելցած է: Ամէն տարի, աշխարհի բոլոր կողմերը, միլիոնաւոր վակոններով ֆօսֆատ կ'արտանորին, մինչդեռ Չիլիէն, ամբողջ նաւեր լեցուն, նիթրատ տը սուտ կուգայ:

Հաշիւ եղած է թէ բոլոր Ֆրանսայի մէջ ո՞րչափ քիմիական պարարտութիւն կը ծախուի: Մէկ հէքթարի համար պէտք է, գրեթէ 150 քիլօկր. նիթրատ տը սուտ եւ 300 քիլօ. սիւրէրֆօսֆատ: Ասիկա ալ գրեթէ 60 ֆր. կ'արժէ: Արդ, Ֆրանսայի մէջ 22 միլիոն հէքթար մշակուած հող կայ, եթէ բոլոր մշակելի հողերը, երկու տարին անգամ մը միայն առնէին այս պարարտութիւնը, սպառումը տարին 700 միլիոնի պիտի հասնէր, Դեռ այս հաշիւէն հեռու ենք, բայց ամէն բան նախատեսել կուտայ թէ, օր մը, հողագիտական սէնտիգաներու շնորհիւ, այս թուանշանին կարելի է հասնիլ:

Այն օրը, պիտի թուի թէ երկրագունտի մակերեսը փոփոխութիւն մը եղած է, որ, իրականութեան մէջ, ուրիշ բան չէ, բայց եթէ երկրի բնական հարստութիւններուն լաւագոյն մէկ բաշխումը: Մինչ, քանի մը երկիրներու մէջ, ինչպէս Ֆրանսայի մէջ, ծերացած հողերը բաւական բարակածին չեն պարունակեր. ուրիշ տեղեր, ինչպէս Չիլիի մէջ, հողը ա՛յնպէս մը յափուացած է բորակածինէն (աղբորակի ձեւին տակ) որ կարելի չէ մշակել: Բաւական է որ հո՞ս բերենք, ինչ որ հոն առատ կը գտնուի: Նոյնպէս, մինչդեռ մեր արտերուն մէջ մենք ֆօսֆօր չունինք. մեր չուրջը ֆօսֆօրով լեցուն՝ կենդանիներու անհամար ոսկորտիներ և գործարաններուն դուռներուն քով խարամներու լեռնակներ կան, որոնք ուրիշ բան չեն բայց եթէ ֆօսֆօրէ լեռնակներ: Պէտք է այս ֆօսֆօր պարունակող

լեռնակները ցրուել մեր արտերուն վրայ, որոնք անկէ չունին:

Այսպէս, մարդկութիւնը երկար ատեն փնտռելէ ետքը, վերջապէս գտաւ թողոր այս չարիքներուն դարմանը, ամենէն առաջին ձեռքի մօտ բաներու մէջ: Մարդոց երկար ատեն ուզեց թողոր նիւթերէ ոտիկ հանել: Ասի թիւրքու անկարելի էր և ամէն սլաւա-գային լանօգուտ Բայց այսօր լաւագոյնը ըրաւ: Ամենէն խոնարհ և ամենէն անարգ նիւթերը երեւան կը հանեն իրենց սլաւունակած հարստութիւնը և կ'սկսին կատարել իրենց դերը կեանքի ընդհանուր շրջանին մէջ:

Վ Ե Ր Զ

Թարգ.

Գ. Ա. Ն. Ի. Գ. Մ. Ս. Ր. Ո. Պ. Ե. Ն.

Երկրագործութեան եւ հողը պարարտացնելու համար գրուած սոյն յօդուած կ'աւարտի ներկայ թերթով. իսկ յաջորդով պիտի սկսինք հրատարակել գեղեցիկ ուսումնասիրութիւն մը Բուսաբանութեան վրայ, զոր մասնաւորապէս Հանրագիտակի համար պատրաստած է Մեծ. Աշոտ Է. Պաղպաղեան՝ անդէսիս անխոնջ Հաշիատակիցն. եւ նոյն գիտութիւնն մեր փոքրիկ ընթերցողներուն աւելի շահեկան ու օգտակար ընելու համար՝ պէտք եղած պատկերներն ալ փորագրեցինք:



Գ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Ժ Ի Ի Լ Պ Ե Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԱՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

— — —

(Շարունակութիւն 16րդ թիւէն)

Ժ.

Ունեցած ջուրերնիս խնայողութեամբ գործածելով իսկ հազիւ երեք օրուան կը բաւէր, և գէշը սա էր որ գտնուած հողերնու մէջ ո՛ր եւ է աղբիւրի հանդիպելիք չունէինք:

Ամբողջ յաջորդ օրը միօրինակ ճամբայ մը կ'արեցինք գետնուղիին անվերջանալի կամարներուն տակ: Ուրքան որ վառելիքով զգալի ըլլալու չափ վար կը հակէր, սակայն դարձեալ յայտնի էր որ լաւ ճամբու մէջ չէինք: Միշտ նոյն փոխանցական շրջանի հողերն էին որ դէմերնիս կ'ելլէին. երեք-արական լոյսը կը շողջար՝ հերձաքարերուն, կրաքարերուն ու հին կոպճաքարերուն վրայ: Կ'ործես թէ լեռան մը կտրուածքին կը հանդիպէինք Տէվոնշայր գետունին մէջ՝ որ իր անունը սուած է սոյն հողերուն: Մարմարիտի սքանչելի կտորներ պատերը կը ծածկէին. ոմանք մոխրագոյն էին ճերմակ երակներով, ուրիշներ կեռասագոյն կամ կարմիր բծաւորուած գեղին զոյնով:

Սոյն մարմարիտներէն շատերը նախա-կենդանիներու հետքեր կը կրէին: Առաջին օրէն սկսեալ ստեղծագործութիւնը ակնյայտնի յառաջդիմութիւն մը գործած էր: Կոշտ եռախորշերու տեղ՝ աւելի կատարեալ դասակարգի մը միացողները կը տեսնէի. ինչպէս թանձրաթեւ ձուկերն ու թեւամոզէսները՝ որոնց մէջ հնէաբանին աչքը դիւրաւ կ'ընդհանարէ ապագայ սողունին նախնական գիծերը: Տեւոնեան ծովերու մէջ այս կարգի կենդանիները կը վիտային եւ որոնք իրենց ժամանակին կազմուած ժայռերուն մէջ մնացին:

Լիտէնպրօք ուսուցչապետը բնաւ ատնց ուշադրութիւն չէր ընել. ան երկու բանի կ'սպասէր. կամ ուղղահայեաց հոր մը բացուելու էր ոտքերուն տակ՝ սրպէս զի վար իջնէ, կամ ո՛ր և է արգելք մը ճամբան կտրելու էր: Բայց իրիկունը վրայ հասաւ եւ այս երկու բաղձանքներէն ոչ մէկը կատարուած էր:

Ուրբաթ իրիկուն սկսել էինք քիչ մը նեղուիլ ծարաւէն: Յաջորդ օրն տասը ժամ քայլելէ ետքը, դիտեցի որ լապտերին լոյսին ցոլացումը պատերուն վրայ շատ աղաւացներ էր, անփայլ սեւ նիւթ մը ամբողջ ճամբան ծածկեր էր: Անգամ մը ձախ ձեռքս պատին կռնցուցի. երբ ետ քաշեցի՝ տեսայ որ սեփ սեւ էր:

— Ահա՛ ամխահանք մը, գոչեցի:

— Հանք մը առանց հանքագործի, սլա-տասխանեց հօրեղբայրս:

— Ո՞վ գիտէ:

— Ե՛ս գիտեմ, ըսաւ հօրեղբայրս իւրստիւ. վստահ եմ որ այս ճամբան փորողը մարդու մը ձեռքը չէ եղած: Բայց ինչ եւ է, ընթրիքի ժամը հասաւ. ընթրենք:

Հանս քիչ մը ուտելիք պատրաստեց. առանց ախորժի կերայ և քանի մը կաթիլ ջուր խմեցի: Երեք մարդու ծառաւը յազեցնելու համար, հազիւ թէ առաջնորդին կէս պարսպ տիկը ունէինք: Երկու ճամբու ընկերներս ծածկոցներու մէջ փաթթուելով շուտ մը քնացան, իսկ ես աչքս չգոցեցի. մինչեւ առտու ժամերը կը համբէի:

Շարաթ օր, առտուան ժամը 12 ին մեկնեցանք. քսան վայրկեան չանցած ահագին խոռոչի մը մէջ հասած էինք. հոս վստահ եղայ թէ այս անձնաւորը փորողը մարդը չէր եղած, որովհետեւ կամարները պատով բռնուած պիտի ըլլային, մինչդեռ հիմալ գրեթէ հրաշքով էր որ հասարակչութեամբ մէջ կը մնային անոնք:

Սոյն սեսակ մը քարայրը հարիւր ոսք լայնք ու 150 ոտք բարձրութիւն ունէր. գետինը ներքին սոսկալի ցնցումի մը հետեւանքով բացուած և այս ահագին պարսպը կազմուած էր, ուր մարդիկ առաջին անգամ կը թափանցէին:

Ածխաբեր շրջանին ամբողջ պատմութիւնը գրուած էր այս խաւարոյնի պատերուն վրայ, և երկրաբանը դիւրաւ կրնար հետեւիլ անոր ամէն մէկ ձեւավորութեան: Ածուխներու խաւերը խճաքարի կամ կաւի երակներով զատուած էին իրարմէ:

Երկրորդական շրջանէն առաջ անցած այս ժամանակին մէջ երկրագունդը ծածկուեցաւ հսկայ բուսարեքութեամբ մը՝ որ կիզիչ ջերմութեան մը և մնայուն խոնաւութեան ազդեցութեան տակ յառաջ եկած էր: Շոգիէ թանձր մթնոլորտ մը երկիրս կը ծածկէր և արեւուն ճառագայթները կ'արդիւնէր: Ըսել է հողագինի վրայ տիրող բարձր բարեխառնութիւնը՝ արեգակէն չէր գար. գուցէ այս երկնային մարմինը դեռ այսօրուան ունեցած դերը չէր կատարեր տակաւին. կլիմաները գոյութիւն չունէին և ամենաբարձր ջերմութիւն մը երկիրս կը տոջորէր բեւեռներէն մինչեւ հասարակած հաւասարապէս. ուրիշ յառաջ կուգար ան. անշուշտ երկրիս ներսէն, Հակառակ Լիտէնպրօք ուսուցչապետին տեսութիւններուն, սոսկալի կրակ մը

կը հրդեհէր մեր մոլորակին բոլորտիքը եւ իր ազդեցութիւնը զգալի կ'ըլլար մինչեւ երկրիս կեղեւին ամէնէն արտաքին խաւերը: Տունկերը՝ արեւուն գոլորշիներէն զրկուելով ոչ ծաղիկ ունէին ոչ պտուղ, բայց արմատներնին զօրաւոր կեանք մը կը ծծէին այդ տաք հողերուն մէջէն: Այս ժամանակները ծառեր չկային, հապա խոտազգի տունկեր, բնդարձակ մարդեր, պտերներ, հօտիսոյներ, կրնդաւորներ, ձիազիք՝ սահմանափակ ընտանիքներ, որոնց տեսակները հազարներով կը բազմանային:

Արդ՝ բոյսերու այս լիառատութեան մէջ է որ հանքածուխը ծնունդ առած է: Երկրիս դեռ առաձիգ կեղեւը՝ իրեն ծածկած հեղուկ զանգուածին բոլոր շարժումներուն կը հնազանդէր. ասիէ յառաջ եկան ահագին ճեղքումներ, և շատ հողերու մակերեսային թը ցածրացան վար իջան. ջուրերը ցած տեղերը կոխեցին և հոն հաւաքուած բոյսերը ծածկեցին՝ ահագին զանգուածի մը պէս: Ա՛լ այսուհետեւ բնութեան քիմիաբանութիւնը գործել սկսաւ. ծովերու խորքերը՝ տունկերը առաջ կիզահողը ձեւացուցին, յետոյ իրենց հետ փակուած կազերուն եւ ներքին ջերմութեան ազդեցութեան տակ խմորուելով՝ կատարեալ հանքաւորում մը կրեցին:

Ահա այսպէս կազմուեցան ածուխի ահագին մթերքները՝ որոնք երեք դարեր կը բաւեն ամբողջ աշխարհի պէտքերուն:

Առանց կանգ առնելու ճամբանիս կը շարունակենք. եւ այս գիտական նկատումներու մէջ թաղուած՝ մինակ ես էի որ ճամբուն երկարութիւնը չէի զգար: Տաքութիւնը շատ փոխուած չէր, բայց քիթս ջրածինի բնածխատի հոտ մը կ'առնէր. շուտով նըշմարեցի հանքագործներուն կրիզու կոչած կազին ներկայութիւնը ահագին քանակութեամբ այս գետնուղիին մէջ. բարեբաղդաբար Ռուսքորֆի լապտերներով կը լուսաւորուէինք. եթէ անխոհեմութեամբ՝ ջահի ձեռին ներս մտնէինք այս քարայրէն, ճամբորդութեան վերջին հանգրուանը հասած պիտի ըլլայինք՝ հոն գտնելով գերեզմաննիս:

Մինչեւ իրիկուն քաղցինք առանց մէկ նշանի. հօրեղբայրս հազիւ կրնար սրտնեղութիւնը պարտկել. քսան քայլ հեռուն

տեսնել կարելի չըլլալով՝ չէինք կրնար հաշուել թէ՛ բռնած ճամբանիս դեռ որքան հեռուն կ'երթար: Իրիկուն տասներկուքին տեսնենք յանկարծ պատ՝ մը ելաւ դիմացնիս: աջ կողմը, ձախ կողմը, դէպի առաջ՝ ամբողջ գոցած էր: անել ճամբու մը ծայրը հասած էինք:

— Աղէ՛կ եղաւ, ըսաւ հօրեղբայրս, դէթ ընելիքս կրնամ որոշել: Հոս՝ Սաքնիւսէմի

— Քաջութի՞ւնդ ալ պիտի պակսի՛ր, ըսաւ դասախօսը:

Չհամարձակեցայ պատասխանել:

ԻԱ.

Յաջորդ օրը առտուն կանուխ՝ ճամբայ ելանք: Աճապարեւոլ էինք. այս դետնուղիին մէջ՝ հինգ օր կորսնցուցինք:



ցուցած ճամբան չէ. այս գիշեր կը հանգչինք ու վաղը ետ կը դառնանք. երեք օրէն կրնանք հասնիլ այն տեղը՝ ուր ճամբան երկուքի կը բաժնուէր:

— Այո՛, պատասխանեցի, եթէ վրանիս ոյժ մնայ:

— Ինչո՞ւ համար չէ:

— Որովհետեւ վաղը ա՛լ ջուրերնիս պիտի հոտնի:

Չպիտի ծանրանամ ետ դարձած ժամանակնիս քաշած տառապանքներնուս վրայ: Հօրեղբայրս կը կրէր այդ տառապանքները, անոնց յաղթելու ինքզինք անկարող զգացող մէկու մը անհամբերութեամբ: Հանս՝ իր համբերատար բնաւորութեան համակերպութեամբ. իսկ ես, միշտ կը գանգատէի ու կը յուսահատէի:

Գուշակածիս պէս՝ երկրորդ օրը ա՛լ ջուր

չունենինք. խմելիք՝ մինակ գիտին կը մընար, բայց այդ դժոխային ըմպելին կոկորդա կայրէր ու վրան անգամ նայիլ չէի ուզեր: Շատ անգամ յոգնութենէս՝ անխտնեմ կը բռնուէին, ու եղաւ որ զգայազիրի դետին ինկայ. այն ատեն խումբը կանգ կ'առնէր, հօրեղբայրս կամ խաւատացին կըրցածնուն չափ կը զօրացնէին զիս. բայց կը տեսնէի որ ուսուցչապետն ալ հազիւ կրնար դիմանալ յոգնութեան ու ծարաւին: Վերջապէս յուլիս 8 ին, սողալով քաջութեամբ՝ կիսամեռ վիճակի մէջ երկու գետնուղիներու միացած տեղը հասանք: Դիակի մը պէս անշարժ, ինկայ փռուեցայ լավայէ ցամաք գետինն վրայ: Առտուն ժամը չորսն էր:

Հանա ու հօրեղբայրս քարի մը կռնած պաքսիմատի մէյմէկ կտոր կրծել կը ջանային: Երկար հեծեծանքներ դուրս կը թռնէին ուռած շրթներէս. խոր թմրութեան մը մէջ ինկայ:

Ինչ մը վերջը հօրեղբայրս քովս դալով ձեռքերուն մէջ վեր առաւ ինձի. « Խեղճ սղայ » միմուսց արգահատանքի շէշով մը: դաժան ուսուցչապետին խանդաղատանքներուն վարժուած չըլլալով՝ այս խօսքերէն շատ զգածուեցայ. ձգեց որ դողդոջուն ձեռքերը բռնեմ իմիններուս մէջ. աչքերը թրջեր էին: Քովէն կախուած ջուրի ամանը առաւ և բերնիս մօտեցնելով « Խմէ՛ » բռաւ:

Չէի՞ սխալեր. հօրեղբայրս խենդեցի՞ր էր. ապուշ ապուշ իրեն կը նայէի. հասկնալ չէի ուզեր:

— Խմէ՛, կրկնեց:

Եւ ջուրին ամանը վերցնելով՝ ամբողջ մէջինը բերանս սպարակեց:

Ո՛հ, ի՛նչ երանութիւն: Ունի մը ջուր՝ շրթունքներս թրջեց. մէկ ունի մը միայն, բայց բաւական եղաւ ինձի վերակենդանացնելու: Ձեռքերս միացնելով շնորհակալ կ'ըլլայի հօրեղբորս:

— Այս պոտ մը ջուրը միայն կար, կը հասկնամ, այս վերջին մնացորդն էր. ա՛լ բոլորովին լմացաւ: Խնամով պահեր էի ատիկա ջրդուրմիս տակը, քան անգամ, հարկը անգամ մտքէս անցաւ խմել. բայց քեզի համար սպահեր էի, Ա. քսէ՛լ, քեզի համար:

— Հօրեղբայրս, թոթովեցի, մինչդեռ արցունքի խոշոր կաթիլներ աչքերէս վար կը գլորէին:

Թարգմ.

ՋԱՐԵՆ Ե. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԳԻՏԱԿԱՆ ՁԲՕՍԱՆՔ

Ջուրը մէկ ամսեմէ միւսը կը ցատէ. — Գլանաձեռ եւ ուղիղ եզերքներով ամանի մը մէջ բռնկած թղթի կտոր մը դնելով՝ ամանը դարձուցէք ջրով լեցուն պնակի մը վրայ. հեղուկը պնակէն ամանին մէջ սլօտի ցատկէ:

* *

Մագի կապ մը քակել. — Առէք մօզ մը, մէջտէզէն կապ մը ըրէք եւ ներկայ եղողներուն ցուցնելէ յետոյ, ձեռքերնուդ մէջ առնելով՝ մատերնիդ գոցեցէք: Պէտք է նայիլ որ ամբողջովին ափին մէջ գտնուի: Ջրմուխ իւնը մագին վրայ կ'աղղէ ու քանի մը վայրկեանէն ձեռքերնիդ բացէք, կապը քակուած, եւ յաճախ աներեւութացած պիտի դանէք:

* *

Չորս հաշ 9 քուանցանով 100 գրել. — Լուծում. 99⁹:

* *

Անկաւելի կարելի ընել. — Սեղանին վրայ քով քովի երեք հատ դրամ դրէք եւ առաջարկեցէք որ մէջտէղինը վերցնեն առանց ձեռք դպցնելու:

Եթէ չկարենան ընել մէկ քովինը առնելով միւսին քով դրէք, որով մէջտէղէն վերցուցած կ'ըլլաք՝ առանց անոր ձեռք դպցնելու:



ՌԵԱԴԻՏԱԿԱՆ ՀԱՅՈՒՄՆԵՐ

32. — Որո՞նք են ծուխ յառաջ բերող պատճառները եւ ինչո՞ւ հանքածխոյ մուխը սեւ է, մինչդեռ փայտինը ձերմակ է:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին					
Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ			ՀԱՍՑԷ		
Տարեկանը	40	դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Տարեկանը	45
Վեցամսեան	20	»	Կ. ՊՈԼԻՍ	Վեցամսեան	25
Եռամսեան	10	»	ՊԱՊ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ	Եռամսեան	12 1/2
ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱՐ			ԹԻՒ 38		
Տարեկանը	4	ըռպլի	ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ	Տարեկանը	10
Ձեռքէ կը ծախուի հաւոր 40 փարայ					

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1.	.	ն	.	35
2.	.	.	ն	.
3.	.	.	ն	.
4.	.	.	ն	.
5.	.	.	ն	.
6.	.	.	ն	.
7.	.	.	ն	.
8.	.	.	ն	.
9.	.	.	ն	.
10.	.	.	ն	.
11.	.	.	ն	.
12.	.	.	ն	.


1. Թուանշան մը : 2. Ասիական թուրքիոյ մէջ քաղաքի մ'անուն : 3. Ափրիկէի մէջ լեռնաշղթայ մը : 4. Սպանիոյ մէջ երեւելի քաղաք մը : 5. Չինաստանի մէջ քաղաք մը : 6. Ովկիանոս մը : 7. Սերպիոյ մէջ քաղաք մը : 8. Անուշ բանջարեղէն մը : 9. Հոտաւէտ տունկ մը : 10. Ասի. թուրքիոյ մէջ կուսակալութեան մ'անուն : 11. Ափրիկէի մէջ ծոց մը : 12. Գիշակեր կենդանի մը :

Ա. ԿՏԱԻՃԵԱՆ

36. — Առաջինս է մի գերանուն .
Իմ երկրորդս է մի թռչուն .
Իսկ ամբողջս պաղոյ մի անուն :

37. — Առաջինս լոյս է միայն ,
Երկրորդս բայ գործածական .
Իմ ամբողջս է մի բանջար .
Երկաւանկ եմ ունիմ վեց տառ :

Յ . Գ . Բ .



ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՇԻՆԻՉ ԵՒ ՀՐԱՀԱԳԻՉ ԲԱՐՈՅԱՎԷՊԵՐ

Յօրինեց Ա. ԴԱԻԹԵԱՆ

Մանուկներու , պատանիներու , եւ նոյն իսկ հասակաւորներու ընթերցման արժանի արդյալեպէս հաւաքածոյ մ'է :

Կը գտնուի ամէն գրալանտագ քով :

Մեր նոր հասցէին ուշադրութիւն ընել կը խնդրուի :

نشانه بربریان مطبعه صحی

استانبول باب عالی جاده سی نومرو 38

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱՎԻՉ

Կ. Պոլիս Պապ-Ալի Ճատտէսի քիւ 38

NICHAN BERBÉRIAN

IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Bab-Ali Djaddéssi N. 38

Կը խնդրենք մեր Մեծ . Գործակալներէն եւ Բաժանորդներէն՝ որ Հանրագիտակի Երդ թիւէն աւելորդ եթէ ունին՝ մեզ վերադարձնելու ջնորհ ընեն :

ԽՐԱԿՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱՎԻՉ

Ն. ՇԱՆ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Իգտամ լրագրի դէմ

Տպագրիչ եւ Փորագրիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ՊԵՐՊԵՐԱՆ ԴԱՏԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԻԻ 38. ԻՊՏԱՆԻ ԼՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԻՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Ասափազար, Ստեփան էֆ. Սափորիչեան
Աֆիոնի Կարահիսար, Աշոտ էֆ. Պազպազեան
Եւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կիւրին, Միսաք էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան
Մարաշ, Արթ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Աղարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքարեան
Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
Սիւս հանքի եկոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր Բեքըրի » » »
Տիարպէիք, Լեւոն էֆ. Սրապեան

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Հին Ուխտի (Սրբազան պատմութիւն)	4
Նոր » » »	4
Մաղկաքաղ (Ընտիր կտորներ ընթերց.)	3
Ֆրանսերէն պատկերազարդ ֆերահան	2
Կ. Տէմիրեան էֆ. Ի Իրագիտութեան Ամբողջական դասընթացքը	
Մաղկաքաղ եկեղեցական պատմութեան	4
Քրիստոնէական (Ս. Խանճեան)	2
Ժողովրդական Տարեցոյց	6
Բուրաստան Մանկանց (Տարեկանը)	10
Աղօթագիրք	10




Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հաս
40, իսկ գաւառաց մէջ 50 փարսյ:

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Ը Ն Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ և թէ օր ըստ օրէ
ասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ
գոհացում տալ նոյն իսկ էն խտապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆ հատատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը
կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան-
գամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի
կից թիւ 10, ուր պիտի դտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա թ Ա Ն

Ա թ Ա Ն

Ա թ Ա Ն